

Հաստատված է
“Ակադեմիական փոխձանաչման և
շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն”
հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
ՀՀ ԿԳՆ նախարար՝ Արմեն Աշոտյան

“_____” հունվար 2010թ.

Տարեկան հաշվետվություն 2010թ.

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը հիմնադրվել է 2006թ.՝ ստանձնելով Հայկական Էնիկ-Նարիկի դերը: Կենտրոնը տրամադրում է որակավորումների ճանաչման ծառայություններ, որոնք ուղղված են անհատներին, գործատուներին, կրթություն տրամադրողներին և բոլոր այն շահառուներին, որոնք ունեն հարցումներ այլ երկրների կրթական համակարգերի վերաբերյալ: Որպես Հայկական Էնիկ-Նարիկ՝ կենտրոնը նաև տրամադրում է տեղեկատվություն Հայկական կրթական համակարգի վերաբերյալ:

2009թ.-ին հիմնադրամը մշակել է իր գործունեության ծրագիրը, որը հաստատվել է խորհրդի կողմից: Սույն հաշվետվությունը կառուցված է այդ ծրագրի վրա:

1. Ճանաչման վերաբերյալ կրթական օրենսդրական դաշտի լրամշակում, առաջարկությունների փաթեթի ներկայացում

2005թ. Հայաստանը վավերացրել է Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ կողմից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը, սակայն ցանկալի է, որպեսզի գործող կրթական օրենսդրությունը նույնպես համապատասխանի միջազգային նորմերին: Որպես օրինակ կուզենայի նշել, որ ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության օրենքում բացակայում է “ճանաչում” տերմինի սահմանումը: Ճանաչման վերաբերյալ իրավական դաշտի ձևավորումը մեծապես կխթանի ՀՀ կրթական համակարգի ճանաչումը: ԱՓՇՍՏԿ-ը մշակել է օրենսդրական լրամշակումների առաջարկությունների փաթեթը, որը ներկայացվել է ԿԳ նախարարություն: Դեկտեմբեր ամսին ստացվել են նախարարության իրավաբանական վարչության և լեզվի պետական տեսչության կարծիքները: 2010թ. կշարունակվեն աշխատանքները այս խնդրի վրա:

Այսօր ՀՀ-ն ունի միջպետական պայմանագրեր մի շարք եվրոպական, ասիական երկրների հետ, որոնք հնարավորություն են տալիս հայ ուսանողներին սովորել այլ երկրներում: Ուսումը ավարտելուց հետո վերադառնալով Հայաստան այդ շրջանավարտները, մի շարք դեպքերում բախվում են իրենց ստացած որակավորումների ճանաչման հետ կապված բարդությունների և, առանձին դեպքերում, նույնիսկ անհնարինության: Որպես հնարավոր լուծում կառաջարկեինք վերանայել այդ պայմանագրերը՝ ավելացնելով համապատասխան դրույթ

որակավորումների/դիպլոմների փոխճանաչման վերաբերյալ հատկապես այն երկրների հետ, որոնք Բոլոնիայի գործընթացի անդամ չեն:

2. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

2009թ. ԱՓՇԱՏԿ-ը խորհրդատվություն է տրամադրել ՀՀ պետական մարմիններին, բուհերին և մի շարք մասնավոր կազմակերպությունների: Շարունակվել է դեռևս անցած տարիներից սկիզբ առած սերտ համագործակցությունը ՀՀ պետական մարմինների՝ մասնավորապես Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Քաղաքացիական ծառայության խորհրդի, Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, Արտաքին գործերի նախարարության, Դատական դեպարտամենտի, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ: 2009թ. ընթացքում Խորհրդատվական տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության գրեթե ողջ նոր ընդունվող անձնակազմի կրթական որակավորումների վերաբերյալ՝ քննելով շուրջ 300 ավարտական և այլ ակադեմիական փաստաթղթեր, այդ թվում նախկին Խորհրդային Միության հանրապետությունների բուհերի կողմից տարբեր ժամանակներում տրված դիպլոմներ: Արտաքին գործերի նախարարության հետ արդյունավետ համագործակցության շարունակության արդյունքում ստուգվել և տեղեկատվություն է տրամադրվել նախկինում Հայաստանի պետական և ոչ պետական բուհերում ուսանած 122 օտարերկրյա քաղաքացիների հայկական որակավորումների և նրանց ակադեմիական և մասնագիտական իրավունքների վերաբերյալ: Սյսպիսով, մեր հանրապետության պետական մարմինները հնարավորություն են ստացել, հիմնվելով ԱՓՇԱՏԿ-ից ստացած տեղեկատվության վրա, որակապես բարելավել աշխատանքի ընդունելության պահանջները՝ պահպանելով պետական մարմիններում բարձրագույն կրթությունը հավաստելու ՀՀ «Կրթության մասին օրենքի 44.5 դրույթը:

2009թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը ուսումնասիրել և ճանաչման որոշում է կայացրել 25 օտարերկրյա դիմումի վերաբերյալ: Ընթացիկ տարվա ընթացքում եղել են նաև 10 դիմորդներ օտարերկրյա բժշկական ու իրավաբանական որակավորումներով և ակադեմիական տեղեկանքներով, որոնց վերաբերյալ ԱՓՇԱՏԿ-ը տրամադրել է համապատասխան խորհրդատվական տեղեկանքներ: Նշյալ դիմումները ներառել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում (10), Իրանում(7), Ռուսաստանի Դաշնությունում (3), Ուկրաինայում (6), Շվեյցարիայում (1), Չեխական Հանրապետությունում (1), Մեծ Բրիտանիայում (1), Գերմանիայում(1), Ղազախստանում(1), Բելառուսում (1), Չինաստանում(2) և Հունաստանում (1) ձեռք բերած որակավորումներ և ակադեմիական փաստաթղթեր: Հաշվետվությանը կից դիագրամ 1-ը ցույց է տալիս օտարերկրյա որակավորումների աշխարհագրությունը՝ ըստ տոկոսային հարաբերակցության:

Դիմորդների որակավորումների ճանաչումը կատարվել է օտարերկրյա և ՀՀ համապատասխան մասնագիտության չափորոշիչների ուսման արդյունքների համադրման և էական տարբերությունների չհայտնաբերման դեպքում: Հարկ է նշել, որ թեև Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայով որակավորումների ճանաչման առավելագույն

Ժամկետ է սահմանված 16 շաբաթը, ԱՓՇԱՏԿ-ը փորձել է հնարավորինս արագ իրականացնել նշյալ գործընթացը: Արդյունքում ճանաչման գործընթացի միջին տևողությունը կազմել է մոտ մեկուկես ամիս, իսկ հազվադեպ հանդիպող ավելի երկարատև դեպքերը որակավորումը շնորհած երկրի/ բուհի ուշացած պատասխանների արդյունք են: Մեր կենտրոնի կողմից տրամադրված ճանաչման որոշումները մեծապես նպաստել են անհատներին իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելու կամ շարունակելու կրթությունը:

2009 թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ն իրականացրել է շուրջ **678** խորհրդատվության տրամադրում, որից **508**-ը՝ ՀՀ պետական մարմիններին և մասնավոր կազմակերպություններին, իսկ մնացածը՝ ԱՓՇԱՏԿ-ի արտասահմանյան գործընկերներին: Համեմատության համար նշենք, որ 2007թ. իրականացվել էր 362, իսկ 2008թ.՝ 550 խորհրդատվության տրամադրում: Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության կողմից տրամադրվել է **90** խորհրդատվական տեղեկանք արտերկիր մեկնող ՀՀ քաղաքացիներին՝ իրենց կրթության և ՀՀ-ում դրա ակադեմիական և մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ (2007թ.-ին տրամադրվել է 55, իսկ 2008թ.՝ 84 նմանատիպ տեղեկանք): Խորհրդատվական տեղեկանքների տրամադրման հիմնական նպատակն է նպաստել ՀՀ-ում ձեռք բերված որակավորման համարժեք ճանաչմանն արտերկրում: Այսպիսով, 2009 թվականի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի կողմից ընդհանուր առմամբ տրամադրվել է **768** խորհրդատվություն և խորհրդատվական տեղեկանք՝ 2007թ.-ի 417-ի և 2008թ.-ի 634-ի համեմատ՝ արձանագրելով աշխատանքային ընդհանուր ծավալի մոտ **22%** աճ 2008 թվականի համեմատությամբ և մոտ **85%** աճ՝ 2007 թվականի համեմատությամբ (վերոնշյալ տվյալների համար տես դիագրամ 2):

3. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին

ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ՀՀ կրթական համակարգի և որակավորումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի գործընկերներին, Եվրոպական տարբեր երկրների որակի հավաստման գործակալություններին, ՅՈՒՆԵՍԿՕ-ին, եվրոպական վիճակագրական վարչությանը: Շարունակվել է համագործակցությունը նաև ԱՓՇԱՏԿ-ի մշտական գործընկերների՝ Կանադայի Ontario College of Teachers, ԱՄՆ-ի World Education Services, International Education Research Foundation-ի և մի շարք այլ կազմակերպությունների հետ, որոնք իրենց երկրում իրականացնում են կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչումը: Ավելին, զգալիորեն խորացել է համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության որակավորումների ճանաչմամբ զբաղվող մի շարք կազմակերպությունների՝ Դոնի պետական տեխնիկական համալսարանի, ИИтеробразование-ի, Լոմոնոսովի պետական համալսարանի հետ նույնպես: Այսպես, 2009 թվականի ընթացքում վերոնշյալ կազմակերպություններին տրամադրվել է շուրջ **180** խորհրդատվություն (2008թ.-ի՝ 55-ի համեմատ): ԱՓՇԱՏԿ-ի կողմից օտարերկրյա կառույցներին արագ ու արհեստավարժ տեղեկատվության տրամադրումը զգալիորեն դյուրացրել է ՀՀ որակավորումների ճանաչումն

արտերկրում, նպաստել այդ որակավորումները ձեռք բերած քաղաքացիների ակադեմիական և մասնագիտական առաջխաղացմանը :

ԱՓՇԱՏԿ-ի ինտերնետային կայքը www.armenic.am, որը գրանցված է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ միջազգային ցանցում և անընդհատ թարմացվում է՝ տրամադրում է տեղեկատվություն ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի ու որակավորումների վերաբերյալ: Հաշվետու տարվա ընթացքում կայքը այցելել են շուրջ **11000** այցելու (2008թ–ին՝ մոտ 9000):

ԱՓՇԱՏԿ-ը մշակել և ներկայացրել է դիպլոմի հավելվածի ազգային տարբերակի 8-րդ կետի՝ ՀՀ կրթական համակարգի երկլեզու, վերջնական նկարագրությունը: Ավելին, գալիք տարում նախատեսվում է պատրաստել և կազմակերպության կայքում տեղադրել մի շարք երկրների կրթական համակարգերի լրիվ նկարագրությունը:

Հաշվի առնելով ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի նկատմամբ արտասահմանյան գործընկերների և կազմակերպությունների աճող հետաքրքրությունը՝ կազմակերպությունն իրականացրել է նաև այդ օրենքի ոչ պաշտոնական անգլերեն թարգմանությունը և տեղադրել կայքում:

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնն իրենց ճանաչման իրավունքների, ամենատարբեր ակադեմիական փաստաթղթերի, կրթական համակարգերի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ոլորտին վերաբերող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ շաբաթական շուրջ երկու տասնյակ պարզաբանում/խորհրդատվություն է տրամադրել նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ անձնական այցելություններով կազմակերպություն դիմած անհատներին:

4. Աջակցություն շարժունությունը խթանող ծրագրերին

Ուսանողների և դասախոսների շարժունությունը այն հիմնական գործիքներից է, որը անհրաժեշտ է երկրի բարձրագույն կրթության համակարգի գրավչությունը և միջազգայնացումը խթանելու համար: Շարժունությունը ոչ միայն կարևոր է անհատի ինքնագարգացման համար, այլև մեծապես խթանում է բուհերի միջև համագործակցությունը: Շարժունությունը մնում է Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղություններից մեկը և, չնայած գործընթացին միացած երկրների ձեռքբերումներին այս ուղղությամբ՝ դեռևս շատ են խոչընդոտները: Խոչընդոտների մի մեծ մաս կապված է որակավորումների և ուսման ժամանակահատվածների ճանաչման, ինչպես նաև ճանաչման գործիքների՝ Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի և նրան հարող հանձնարարականների, կրեդիտային համակարգի, դիպլոմի միասնական հավելվածի, ուսման պայմանագրերի, որակավորումների ազգային համակարգերի ներդրման աստիճանի հետ:

Այսօր Հայաստանի բուհերում գործող ճանաչման ընթացակարգերը հիմնված չեն ուսման արդյունքների վրա և, հաճախ, առանձին անհատների որոշման արդյունք են: Բուհերում խթանելու համար Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի սկզբունքները՝ որպես հնարավոր լուծման տարբերակ կառաջարկենք ընդգրկել որակավորումների ճանաչումը որպես որակի հավաստման գործընթացի պայման:

5. Ճանաչման ընթացակարգերի և փորձառությունների վերաբերյալ ուսուցման կազմակերպում

2008թ. ԱՓՇԱՏԿ-ը, պարզելու համար թե ինչպիսին են բուհերում կիրառվող ճանաչման ընթացակարգերը, իրականացրել է ուսումնասիրություն ՀՀ 28 պետական և հավատարմագրված ոչ-պետական բուհերում: Հետազոտության արդյունքում որոշվեց կազմակերպել պարբերական ուսուցումներ բուհերի համար: Դեկտեմբերի 11-ին ԱՓՇԱՏԿ-ի կողմից անցկացվեց սեմինար՝ «Օտարերկրյա որակավորումների ճանաչում, Լիսաբոնի կոնվենցիա, լավագույն փորձառության օրինակներ» թեմայով: Սեմինարին մասնակցում էին հիմնականում պետական բուհերի և կրթական կազմակերպությունների շուրջ 25 ներկայացուցիչներ: Սեմինարի նպատակն էր ներկայացնել ճանաչման իրավական դաշտը, ընթացակարգերը և գործիքները: Միջազգային փորձագետների կողմից ներկայացվեցին փորձառության լավագույն օրինակներ և քննարկվեցին իրական դեպքեր: Սեմինարի նյութերը տեղադրված են կենտրոնի կայքում <http://www.armenic.am/index.php?page=seminar09>:

6. Համագործակցություն որակի ապահովման ազգային ծառայության հետ

Որակի ապահովումը անհատի որակավորման ճանաչման անհրաժեշտ նախապայմանն է, որի մասին նշվել է դեռ 2001թ. Պրահայի կոմյունիկեում: Որակի ապահովման մասին տեղեկությունները օգտագործվում են ճանաչման մասնագետների ամենօրյա աշխատանքում: Որակի ապահովման/հավատարմագրման մասին տեղեկատվությունը մեծամասամբ հասանելի է առցանց՝ ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցի միջոցով, որի հետևանքով որակի ապահովման և ճանաչման ազգային մարմինների միջև համագործակցությունը միշտ չէ տեսանելի: Երկու մարմինների միջև համագործակցությունը առանձնապես սերտ է, երբ հարցը վերաբերվում է որակավորումների ազգային համակարգին, քանի որ աշխատանքը որակավորումների ազգային համակարգի վրա և որակի ապահովումը կարելի օգտագործել որպես գործիք՝ Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի կիրառման համար:

7. Կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչում

2009թ. Լատվիական ԷՆԻԿԸ ԱՓՇԱՏԿ-ի տնօրենի համար կազմակերպել էր անհատական ուսուցում մասնագիտական ճանաչման վերաբերյալ: Մասնագիտական ճանաչումը՝ աշխատանքի անցնելու նպատակով հայցված ճանաչումն է: Եվրոպայի անդամ պետությունների համար գործում է Եվրախորհրդարանի 2005/36/EC հրահանգը՝ կարգավորվող մասնագիտությունների համար: Հրահանգում սահմանված է

մասնագիտություններ ցանկը, որոնք համարվում են կարգավորվող, ինչպես նաև այդ մասնագիտություններով կրթական պահանջները և աշխատելու պայմանները : Հրահանգը նաև կարգավորում է ճանաչման հարցերը: Հրահանգը թարգմանվել է հայերեն և նախատեսվում է 2010թ. բավարար միջոցների առկայության դեպքում հրատարակել սույն իրավական փաստաթուղթը:

8. Բոլոնիայի գործընթաց

2009թ. ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է մասնակցել նաև Բոլոնիայի գործընթացի աշխատանքներին, մասնավորապես շարժունության և գնահատման գեկոյցների պատրաստմանը, որոնք ներկայացվել են Լյովենի նախարարական համաժողովին:

9. Միասնական աստիճաններ (Joint-degree)

2010թ. ԱՓՇԱՏԿԸ իրականացրել է ուսումնասիրություն միասնական աստիճանների վերաբերյալ(տե'ս Հավելված 1) 2010թ. նախատեսվում է հրատարակել ուսումնասիրությունը:

2009թ.-ին հիմնադրամի անձնակազմը էական փոփոխությունների չի ենթարկվել: Գրասենյակային պայմանները բարելավելու նպատակով ԱՓՇԱՏԿ-ը 2010թ. նախատեսում է հատկացված բյուջեի սահմաններում տարածքի վարձակալություն: Ներկայումս կենտրոնը զբաղացնում է 1,5 սենյակ ԿՏԱԿ-ի սեփականությունը համարվող տարածքում: Բայց հաշվի առնելով երկու կենտրոնների աշխատանքների ծավալը հետագա համակեցությունը դարձել է անհնար:

ԴԻԱԳՐԱՄԻ

ԴԻԱԳՐԱՄ 2
